

ՆԻԿՈԼԱՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳԵՐՈՒՄ

1. asd(u)- բայի ստուգաբանությունը

Այս բայի ստուգաբանությամբ մասնագիտական գրականության մեջ ըստ էության ոչ ոք չի զբաղվել: Միայն քե Ռուսա 1-ի Թոփուզավայի երկլեզվյան արձանագրության ուրարտական տեքստում, փաստական նյութի արտակարգ սղության պարագայում, asd(u)-ի եղծված վերջավորության համար Գ.Ա. Մելիքիշվիլին վաղուց իրավամբ առաջարկել է -bi վերականգնումը¹: Սակայն այդ asdubi-ն, մի կողմից անգուշորեն նա դիտարկել է որպես assubi-ի տարրնթիւրցում, իսկ մյուս կողմից, նույնքան անհամոզիչ, համարել Թոփուզավայի արձանագրության ասորեստանյան զուգահեռ տեքստի šakānu-ի համապատասխանությունը²: Եվ դա այն դեպքում, երբ ուրարտական asu(u)-ն ունի «դարձնել, վերածել»³, իսկ ասորեստանյան šakānu-ն՝ «դնել, կատարել, հաստատել»⁴ իրարամերձ իմաստները:

Խնդրո առարկա հարցում, ոժբախտաբար, դրական արդյունքի չի հանգել նաև Ֆ.Վ. Քյոնիգը, երբ Թոփուզավայի երկլեզվյան արձանագրության ուրարտական asdu[bi]-ի փոխարեն առաջարկել է as-du-ն(?) անմենեփ ընթերցումը: Այնուհետև, կրկնակի խախտումներով, մերթ անտեսելով տվյալ բայի իր իսկ կողմից առաջարկված ս(?) վերջավորությունը, as-du-ն վերընթերցել է as-sub, մերթ էլ, ըստ երևույթին, հաշվի առնելով, որ ուրարտերենում փակ վանկով բառերը իսպառ բացառված են՝ ստիպված այդ շինծու as-sub-ը դարձրել է as-gu-bi: Եվ այս ամենից հետո այդ խեղաթյուրված asgubi-ն ի վերջո նա նույնացրել է Թոփուզավայի արձանագրության ասորեստանյան տեքստի e-ru-bu-ի հետ⁵: Բայց չէ որ այստեղ ևս, բացի մնացած անհամոզիչ հանգամանքներից, ասորեստանյան erubu-ն ունի «մանել»⁶, իսկ ուրարտական խեղաթյուրված asgubi-ն՝ «քոնագրավել, զավթել»⁷ նույնպես իրարամերձ մեկնաբանությունները:

Դժվար է համաձայնվել նաև Յ. Ֆրիդրիխի և Ի.Մ. Դյակոնովի եզրահանգումների հետ, երբ ուրարտերեն asd(u)- անցողական բայի խորիմտյան տարեզրության as-du- պակասավոր տարբերակի տակ

հակված են տեսնելու այլ խոսքի մասեր՝ «մման»⁹ կամ «շնորհիվ»¹⁰: Ելնելով կոնտեքստից, կարծում ենք. կասկած չի հարուցում. որ Խորխորյան տարեգրության *as-du*-ի տակ. ի տարբերություն Թովուգավայի արձանագրության եզակի *I* դեմքի *as-du-[bi]*-ի, ինքնին ենթադրվում է նույն բայի եզակի *III* դեմքի *ás-du-ni*-ն, որն այժմ ամբողջական գրելաձևով արդեն հանդիպում է Կարմիր-բլուրի¹¹ և Այանիսի¹² նորահայտ արձանագրություններում: Դեռ ավելին, ներկայումս գիտությամբ հայտնի են նաև *ásd(u)*- անցողական բայի գրության քերականական այլ տարընթեցումներ՝ *ás-du-li*¹³ և *ás-du-li-ni*¹⁴:

Ի դեպ, բացի հիշատակված օրինակներից, առկա են նաև մի ամբողջ շարք այլ ակնառու փաստեր, որոնք հստակորեն վկայում են. որ ուրարտերենում ամբողջական գրելաձևով արտահայտված նույնիսկ հենց միևնույն բայերի կողքին, արձանագրություններում համատարած առկա են նրանց պակասավոր տարընթեցումները. *harharuli* (KYKH, 392, տող 7) և *harharu* (KYKH, 173, VI, տող 18), *karubi* (KYKH, 241F, տող 22), *karuali* (KYKH, 241D, տող 49) և *karu* (KYKH, 520 դիմ. կողմ, տող 14), *'aldubi* (KYKH, 174B2, տող 26), *'alduni* (KYKH, 77, տող 10) և *'aldu* (KYKH, 393, դիմ. կողմ, տող 4), *sudustuni* (KYKH, 520, դիմ. կողմ, տող 13) և *sudustu* (KYKH, 520, հակ. կողմ, տող 8), *nulustubi* (KYKH, 173, II, տող 42) և *nulustu* (KYKH, 478, տող 7):

Դեռ ավելին, փաստական նյութի հանգամանալի հետազոտությունը վկայում է, որ չարժե գուր կասկածներ տուծել Խորխորյան տարեգրության երկու պակասավոր *ásdu*-ների բայ լինելու մասին, քանի որ հենց նրանք են, ինչպես մի փոքր հետո կտեսնենք, Թովուգավայի արձանագրության մասամբ եղծված *ásdubi*-ի հետ միասին, փաստորեն միակ հավաստի փաստարկները *ásd(u)*- անցողական բայիմաստը ըստ ամենայնի բացահայտելու համար: Ուստի հերթականությամբ դիմենք հենց դրանց ծառայությանը:

Եվ, այսպես, Թովուգավայի երկլեզվյան արձանագրության ուրարտական և ասորեստանյան նույնական հատվածներում այդ մասին ասված է.

1. ...a-ru-[bi ^{LU}_{UKU} ^{MEŠ}] ^{URU}Ar-di-ni-ni a-šu-ni *ás-du*-[bi UD] ^{ME}KUR-ni-[u-ki] ... (KYKH, 387, ուբարտ. տեքստ, տողեր 23-24)

... կատարեցի ժողովրդի (համար) Արդինի քաղաքի տոնախմբություն, մտա (այդ) օրը երկիրն-ին...

2. ...[EZEN a]-na ^{LU}_{UKU} ^{MEŠ} ina ^{SA}_{URU}Mu-ša-šir *ás*-[ku]-un [i]-na lib-bi UD ^{ME}ana KUR-ia e-ru-bu ana-ku...(KYKH, 387, ասորեստ. տեքստ, տողեր 22-23)

... Տոնախմբություն ժողովրդի (համար) ներսում Մուսասիր քաղաքի կատարեցի: (Այդ) օրը երկիրն-ին մտա ես...

Այսպիսով, եթե նկատի ունենանք, որ ուրարտական տեքստի arubi-ն ասորեստանյան իդենտիկ հատվածի aškun-ն է, ^{URU}Ardini-ն՝ ^{P1}Musasir-ը, asdubi-ն՝ erubu anaku-ն, KUR-ni-uki-ն՝ KUR-ia-ն. ապա ակնհայտ է, որ աորեստանյան հատվածը փաստորեն լիովին հանդիսանում է ուրարտական տեքստի ճշգրիտ թարգմանությունը: Այստեղ միայն ավելացնենք, որ ուրարտական տարբերակի KUR-ni-[e-di] նախկին անհաջող վերականգնումը մենք ճշգրտել ենք KUR-ni-[ü-ki] ձևով՝ Խորխորյան տարեգրության KYKH, 173, II, տողեր 55-57, III տող 1 և III, տողեր 23-25 իդենտիկ տեքստերի հիման վրա: Ինչպես երևում է, դա ըստ ամենայնի ներդաշնակում է նաև Թփուգավայի արձանագրության իդենտիկ հատվածի KUR-ia-յի հետ:

Միայն նշենք, որ ուրարտական տեքստում ձևականորեն բացակայում է սոսկ ասորեստանյան anaku-ի iese համապատասխանությունը, քանի որ ašdubi-ն, առանց iese-ի ևս, ինքնին erubu anaku է նշանակում: Ի դեպ, հատկանշական է, որ եթե anaku-ն բայերի հետ ասորեստանյան տեքստում օրինաչափորեն հիշատակվում է եռակի, ապա iese-ն ուրարտական հատվածում բացակայում է համատարած: Հմնտ. anaku... lu allik (ասորեստ., տող 10) և uladi (ուրարտ., տող 9), anaku...lu atalaka (ասորեստ., տող 16-17) և uladi (ուրարտ., տող 17) և, վերջապես, erubu anaku (ասորեստ., տող 23) և asdubi (ուրարտ., տող 23):

Այժմ անդրադառնանք Խորխորյան տարեգրության asdu պակասավոր բայով երկու կոնտեքստներին և տեսնենք, թե որքանով են նրանք արդարացնում Թփուգավայի երկվեզվյան արձանագրության փաստական նյութի հիման վրա առաջարկվող ուրարտա-ասորեստանյան asdu-erebu «մտնել» նույնացումը:

1. ^mArgištiše ^mMenua[hi]niše ^{KUR}Aš[šur ^{LÚ}A.S]I^{MES}-sie ^{KUR}ebani-[u]ki asdu ^{LÚ}[hu]radineli uelidubi... ^{ŠADU}Kulašini ^{ŠADU}babani su[idulubi ^{LÚ}A.S]I^{MES} a]šubi šiubi ^{KUR}ebani-uka[ni]...(KYKH, 173, II տողեր 55-57, III, տողեր 1-7):

Արգիշտին, Մենուայի որդին, ասում է. Ասորեստանյան զորքը երկիրն-իմ ներխուժեց: Աշխարհազոր հավաքագրեցի,... մինչև Կուլաշինի լեռը հետ շարտեցի,... զորքին հետապնդեցի, վտարեցի երկրից-իմ:

2. ...^mAr[gi]štiše alie É.GAL^{MES} šiduli ^{KUR}šurili(?) išpuiubi ^{KUR}Aššur ^{LÚ}huradie ^{KUR}e[ba]ni-uki ašdu... ^{LÚ}au[e]rasili kid[a]nubi ^{KUR}Aššur sui[dulu]bi za[šgu]bi [šiubi] ^{KUR}ebani-uka[ni] (KYKH, 173, III, տողեր 23-31):

Արգիշտին ասում է. Ամրոցներ կառուցեցի, թագավորությունը ամրապնդեցի: Ասորեստանի զորքը երկիրն-իմ ներխուժեց... Օժանդակ զորքեր առաքեցի, Ասորեստանը հետ շարտեցի երկրից իմ:

Ինչպես հստակ երևում է, եթե Թովուզավայի արձանագրությունը ազդարարում է հաղթական ռազմական արշավանքից հետո ուրարտական արքայի հանդիսավոր մուտքը հարազատ հայրենիք՝ asdubi KUR-ni-uki (KUR-ia erubu anaku). ապա Խորխորյան տարեգրությունը, ընդհակառակը, երկու դեպքում էլ գուժում է աորեստանյան ւսնեղ զորքերի հանդուգն ներխուժումը Ուրարտու (^{KUR}Asšur ^{LU}A.SI^{MES15}-šie ^{KUR}ebani-uki ašdu, ^{KUR}Assur ^{LU}huradie¹⁵ ^{KUR}ebani-uki asdu): Այդ պատճառով էլ Թովուզավայի արձանագրության ուրարտական տեքստում ašd(u)- բայը խոնարհված է եզակի թվի I դեմքով (asdubi). Իսկ Խորխորյան տարեգրության ցիտված հատվածների պակասավոր ašdu երկու տարբերակների տակ անկասկած ենթադրվում է նույն բայի եզակի թվի III դեմքը (ašduni), որը ներկայումս կատարյալ գրելաձևով գիտությանը արդեն հայտնի է Ռուսա II-ի Կարմիր-բուրի KYKH, 424, տող 21 ծավալում արձանագրությունից:

Հոդվածի սույն բաժնի վերջում մեզ մնում է անդրադառնալ այն հարցին, քե ašd(u)- բայի համար վերոհիշյալ փաստական նյութի շնորհիվ մեր կողմից առաջարկված «մտնել», «ներխուժել» նշանակությունը որքանով է, արդյոք, իրեն արդարացնում նրա այլ հիշատակություններին վերաբերող ուրարտական արձանագրություններում: Ուստի, առաջին հերթին, ստորև ներկայացնում ենք այդ տեքստերը.

1. ... ^dHal-di-ni É me-i a-i-ni-i zu-ma-gi áš-du-u-ni a-li áš-du-li-e si-na-am-di-ni nu-ri-e...(KYKH, 424, տողեր 21-22)
2. ... ^dHal-di-ni É me-i a-i-ni-i zu-ma-gi-e áš-du-u-ni a-li-e áš-du-li II-am-di-ni mu-ú-ri...(Ayanis, I, էջ 257, սեկցիա III, տողեր 7-8)
3. ...^mRu-sa-a-še [a-li a-li-e ^dHal-di]-ni É áš-du-li ha-ab-ti-ni KIN(?) ma-nu-ni...(KYKH, 425, տողեր 9-10)
4. ...^mRu-sa-a-še a-li a-li-e ^dHal-di-ni-e É áš-du-li ha-ab-ti-ni-e KIN ma-nu-ni...(Ayanis, I, էջ 257, սեկցիա IV, տողեր 5-6)
5. ...^mRu-sa-a-še a-li a-li-e ^dHal-di-ni-e É áš-du-li-e ha-[ab-ti-ni KIN ma-nu-ni]...(KYKH, 415, տող 7)
6. ... a-li ^dHal-di-na-ni KÁ UDU e-ra-ši-ni u-u-li a-li ^{LU}pa-la-gi ma-nu-li áš-du-li-ni ^dHal-di-ni-e É...(KYKH, 424, տող 14)
7. ... a-li ^dHal-di-na-a KÁ UDU e-ra-ši-ni u-u-li a-li áš-du-li-ni ^dHal-di-ni É (Ayanis, I, էջ 257, սեկցիա II, տողեր 8-9)
8. ... a-li i-ni ú-li ^{KUR}šu-ri-li áš-du-li-ni ^Ési-ir-ha-ni-ni ma-ri-a-hi-ni ^Ésu-si-ni-ka-a-i...(Ayanis, I, էջ 257, սեկցիա II, տողեր 10-11)
9. ... [a-li ^dHal-di-na-ni KÁ] UDU e-ra-a-ši-ni-e u-u-li [a-li ^{LU}pa-la-gi ma-nu-li áš-du-li-ni ^dHal-di-ni-e É] ...(KYKH, 270, տող 7)

10. ...[a-li i-ni ù-li ^{KUR}šú-ri-li₁₀ ù-ù-la-li áš]-du-li-i-ni ^Ési-ri-ḫa-ni-ni [su-si-ni-ka]... (KYKH, 270, տող 9)

Ցիտված տեքստերը, դժբախտաբար, առայժմ ենթակա չեն կապակցված քարգմանության: Սակայն կասկածից վեր է, որ Թովազավայի երկլեզվյան արձանագրության և Խորխորյան տարեգրության փաստական նյութի հիման վրա asd(u)- բայի համար առաջարկված «մտնել» քարգմանությունը այստեղ ևս արդարացնում է իրեն: Այդ մասին վկայում է արարողության մասնակիցների մերթ ընդ մերթ ձեռնարկած ելումուտը պաշտամունքային ամբողջական կոմպլեքսի զանազան կառույցներ՝ տաճարային սպասավորի մուտքը Խալդիի աստծու տուն (^{L1}palagi asdulini ^ÉHaldini É), ուրարտական տեքստի քնակչության մուտքը նշանավոր sirḫani տուն՝ susi տան առջև (^{KUR}šurili ášdulini ^Ésirḫanini mariaḫini ^Ésusini-ka):

2. erasini բառի մեկնաբանությունը

Այս բառը ուրարտական սեպագիր աղբյուրներում ունի բավական տալ գործածություն: Վաղուց ի վեր հայտնի է եղել նրա սոսկ միակ հիշատակությունը, որի հիման վրա ուրարտական արձանագրությունների դիվանի հեղինակ Գ.Ա. Մելիքիշվիլին առաջարկել է UDU e-ra-a-ši-ni-e ընթերցումը՝ առանց ուրարտերեն բառի մեկնաբանության¹⁶: Իսկ Ֆ.Վ. Քյոնիգի դիվանում նույնիսկ ստկա է erasini բառի խեղաթյուրված ընթերցումը՝ ...]-ši-e-ra a-ši-ni-e¹⁷: UDU erasini բառակապակցության վերջին շրջանի երկու հիշատակությունների դեպքում ևս մասնագիտական գրականության մեջ դարձյալ այդ առթիվ որևէ առաջընթաց չի նկատվել, եթե նկատի ունենանք, որ տողերիս հեղինակը, UDU erasini-ին զուգընթաց, քյուրիմացաբար առաջարկել է նաև ^{UDU}erasinie կամ ^{UD}e-ra ši-ni¹⁸, իսկ Ս. Սալվինին՝ կրկնել է Գ.Ա. Մելիքիշվիլու առաջարկած վերոհիշյալ ընթերցումը՝ նույնպես առանց մեկնաբանության¹⁹:

Սակայն նորահայտ արձանագրությունների փաստական նյութը, ինչպես որոշ հապաղումով դրանում կհամոզվենք ստորև, կասկած չի հարուցում, որ ներկայումս բավական հուսադի կովաններ են ստեղծվել վստահորեն անդրադառնալու erasini բառիմաստի բացահայտմանը: Ասենք նաև, որ մեզին հետևակարներ ժամանակին առկա են եղել նաև Արգիշտի II-ի Հուդիի արձանագրության պակասավոր հատվածներից մեկում՝ աշխարհառչակ արևելագետ Յ. Ֆրիդրիխի կողմից UDU.SE UDU «ոչխար գեր (և) ոչխար» մեկնաբանության հիման վրա²⁰ (նախկին UDU-še UDU վիճելի ընթերցման փոխարեն), որի ճշգրիտ ընթերցումը, ինչպես նաև GUD.SE-ն, բարեբախտաբար, առկա է նաև խեթական սեպագիր աղբյուրներում²¹: Այնինչ UDU-ŠE ընթերցման պարագայում մեզ

(կարծում ենք, ոչ միայն մեզ) թյուրիմացության մեջ է գցել, մի կողմից ^{UDU}šū-se «ոչխար» բառի իդենտիկ վերջավորությունը, մյուս կողմից. խորիւրդյան տարեգրության VII տարվա ռազմական ավարի 33 հազար 203 զլովխ UDU.SE «գեր ոչխարների» բացառիկ և արտասովոր բազմաքանակությունը²²:

Նշենք նաև, որ Յ. Ֆրիդրիխի առաջարկած UDU.SE «ոչխար գեր» ընթերցման և մեկնաբանման հայտնագործումը այժմ արդեն ըստ ամենայնի հիմնավորվում է Ռուսա III-ի Գյովելեքի նորահայտ պաշտամունքային արձանագրության ստորև բերվող արտակարգ հարուստ փաստական նյութով.

^mRusaše ali guni telzuse terubi aše A^{MEŠ} šuinini nikiduli UDU.MÁŠ.TUR ^dHaldie nipsidulini GUD V UDU ^dHaldie TAG UDU.ŠE UDU ^dIM UDU.ŠE U[DU] ^dUTU UDU.ŠE UDU ^dAruban[ie] UDU.ŠE UDU DINGIR^{MEŠ} UDU.ŠE UDU ^dNIN GUD ^mRusainie DINGIR-gi²³ GUD ÁB ^mRusainie ^dNIN GUD ÁB ^dAniqu-gi²⁴ III UDU DINGIR^{MEŠ} šuinini UDU.ŠE UDU ^dAššur UDU.ŠE UDU ^dNalainie UDU.ŠE UDU ^dQuera... aše A^{MEŠ} nikiduli aše A^{MEŠ} esiašiuli UDU.ŠE UDU ^dHaldie²⁵...

Ռուսան ասում է. իսկապես հրաման արձակեցի. երբ ջրերը ծովից բխեն, ու կալդի աստծու (պատվին) թող մորթվի, ցուլ (և) հինգ ոչխար՝ Վարուբանիին, ոչխար գեր (ե) ոչխար՝ աստվածներին. ոչխար գեր (և) ոչխար՝ դիցուհիներին, ցուլ՝ Ռուսայան աստծուն, կով՝ Ռուսայան դիցուհուն, կով՝ Անիկու դիցուհուն, երեք ոչխար՝ աստվածներին ծովային, ոչխար գեր (և) ոչխար՝ Աշշուր աստծուն, ոչխար գեր (և) ոչխար՝ Նալսինի աստծուն, ոչխար գեր (և) ոչխար՝ Նուերա աստծուն... երբ ջրերը բխեն (և) երբ ջրերը հոսեն, ոչխար գեր (և) ոչխար՝ Խալդի աստծուն...

UDU.ŠE-ով ըստ ամենայնի հարուստ սույն փաստական նյութը մեր ուշադրությունը, բնականաբար, սևեռում է նաև մի շարք այլ իդենտիկ փաստերի վրա, երբ մասնագիտական զրականության մեջ իրական GUD.ŠE-ի, AB.ŠE-ի, UDU.ŠE-ի, PIT.HAL.LU ŠE-ի փոխարեն ամենուրեք սխալմամբ ընթերցվել են GUD-še, ÁB-še, UDU-še և PIT.HAL.LU-še: Սհա այդ տեքստերը.

- I. ...VI ME VI [ANŠU].KUR.RA I ME LXXXIV ANŠU.A.AB.BA^{MEŠ}
VI LIM II ME LVII ^{GUD}pahini XXX LIM III LIM II ME III
UDU.ŠE (KYKH, 173, III, տողեր 42-43)

...606 ձի, 184 ուղտ, 6.257 (զլովխ) խոշոր եղջերավոր անասուն, 33.203 (զլովխ) ոչխար գեր...

2. ...LUGÁL ^mDiauhī [^{LU}bur]a aštubi aldubi mešini piei...ali meše ^mArgištiše ^mDiauhiniše [ar]uni... I LIM PIT.HAL.LU^{MEŠ} III ME ^{GUD}pahini [I] atibi ^{UDU}šūše ali meše esia [^mDi]auhinidi terubi MU.MU-ni ardilani... [I ME

GJUD.ŠE I ME ÁB.ŠE V ME UDU^{MEŠ} III ME PIT.HALLU Š[E]...(KYKH, 174B1, տողեր 17-25)

Թագավորին Դիաուխի ցեղի ստրուկ դարձրի, ենթարկեցի հարկի: Ահա թե ինչպիսի հարկ Արգիշտի (թագավորին) դիաուխցին մատուցեց... 1000 լծկան ձիեր, 300 (զուխ) խոշոր եղջերավոր անասուն, 10.000 զուխ մանր եղջերավոր անասուն: Ահա թե ինչպիսի հարկ տեղում Դիաուխի ցեղի համար հաստատեցի ամենամյա վճարման... 100 ցուլ գեր, 100 կով գեր, 500 ոչխար, 300 լծկան ձիեր գեր...

3. UDU ^{MEŠ} "Argišti[nie DINGIR] ^{GUD} ÁB ^{MEŠ} "Argišti[nie ^{MEŠ} "NIN]²⁶... ase A^{MEŠ} ešiašul[i] UDU.ŠE UDU ^{MEŠ} "Haldie TAG UDU ^{MEŠ} "Teišeba UDU ^{MEŠ} "Šiuinie UDU ^{MEŠ} "Arubanie UDU [^{MEŠ} "inaina]aue²⁷ UDU ^{MEŠ} "inuanaue... (KYKH, 407, հալ. կողմ, տողեր 6-7, 25-31)

...ոչխար՝ Արգիշտյան աստծուն, կով՝ Արգիշտյան դիցուհուն: Նրբ ջրերը հոսեն, ոչխար գեր (և) ոչխար Խալդի աստծուն թող զոհաբերվի, ոչխար՝ Թեյշեբային, ոչխար՝ Շիվինին, ոչխար՝ Վարուբանի դիցուհուն, ոչխար՝ աստվածներին, ոչխար՝ դիցուհիներին...

4. ... ^{MEŠ} "Rusaše ali ^{MEŠ} "Haldinani KÁ bidini guni ardiše guni arqauše manuli qudulani šuhinasi MÁŠ.TUR ^{MEŠ} "Haldie nipsidulini GUD II UDU ^{MEŠ} "Haldie TAG UDU.ŠE²⁸ ^{MEŠ} "IM-a UDU.ŠE²⁸ ^{MEŠ} "UTU-nie ^{GUD} ÁB ^{MEŠ} "Arubanie... (M. Salvini, Ayanis, I, էջ 254, սեկցիա I, տողեր 8-10)

Ռուսան ասում է. Խալդյան դուների կողմից իսկապես հրաման, իսկապես arqauše է եղել տաճարում նոր. ուլ Խալդի աստծու պատվին թող մորթվի, ցուլ (և) երկու ոչխար Խալդիին թող զոհաբերվի, ոչխար գեր՝ Թեյշեբային, ոչխար գեր՝ Շիվինին, կով՝ Վարուբանի դիցուհուն...

Այսպիսով, առկա փաստական նյութից հստակ երևում է, որ Ռուարտում և հարևան երկրներում բնակչությունը զբաղվել է ոչ միայն սովորական, այլև տարատեսակ գեր ցուլերի, կովերի, ոչխարների և լծկան ձիերի աճեցմամբ:

Սակայն եթե սովորական ուլերի, ցուլերի և ոչխարների զոհաբերությունը պաշտամունքային արարողությունների ժամանակ եղել է համատարած երևույթ, ապա զոհաբերվող կենդանիների մեջ երբեմն հանդիպում են նաև UDU.ŠE-ներ, այսինքն՝ «գեր ոչխարներ», որոնք սովորական ոչխարներին զուգընթաց, սակայն առաջնահերթ, զոհաբերվում են սոսկ բացառիկ դեպքերում, այն էլ հիմնականում ուրարտական դիցարանի գերագույն եռյակի՝ Խալդիի, Թեյշեբայի, Շիվինիի և գերագույն դիցուհի Վարուբանիի պատվին:

Մյուս կողմից, հողվածի սույն բաժնի ողջ շարադրանքում առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն ակնառու փաստը, ըստ որի UDU.ŠE գաղափարագրերի կոմբինացիայի ŠE բաղադրիչը փաստորեն հանդիսանում է UDU erašini կոմբինացիայի ուրարտերեն erašini

«գեր» բառի շումերական համապատասխանությունը: Ընդ որում *erašini*-ն որպես UDU «ռչխար» գաղափարագրի մակդիր ուրարտական վիմագրերում առայժմ հիշատակվում է ընդհամենը երեք անգամ: Սհա այդ իդենտիկ տեքստերը.

1. ...[ali ^dHaldinani KA] UDU *erašini* ūli [ali ^{LU}palagi manuli ašdulini ^dHaldinie É]...(KYKH, 270, տող 7)
2. ... ali ^dHaldinani ^{GIS}KÁ UDU *erašini* ūli ali ^{LU}palagi manuli ašdulini ^dHaldinie É...(KYKH, 424, տող 14)
3. ... ali ^dHaldina KÁ UDU *erašini* ali ūli ^{LU}palagi manuli ašdulini ^dHaldini É...(Ayanis, I, էջ 257, սեկցիա II, տողեր 8-9)

Հատկանշական է, որ GUD.ŠE «ցուլ գեր»-ը, ^{GUD}AB.ŠE «կով գեր»-ը, UDU.ŠE «ռչխար գեր»-ը, PIT.HAL.LU ŠE «զծկան ձի գեր»-ը, մի կողմից, և UDU *erašini* «ռչխար գեր»-ը, մյուս կողմից, լիովին համընկնում են ոչ միայն իմաստային ստույգով, այլև բառակապակցությունների շարահյուսությամբ:

NICOLAY HAROUTHIOUNYAN

NEW OBSERVATIONS ON URARTIAN LEXICOGRAPHY

1. Verb *ašd(u)*-

ašdubi KUR-ni-uki of the Urartian text of the Topzawa bilingual, in all probability, corresponds to *ana KUR-ia erubu anaku* of the Assyrian version of the text, meaning "I entered the country". Based on this correspondence, the author considers the form *ašd(u)*- as the Urartian translation of Ass. *erubu* "I entered" and offers the meaning "to enter" for the Urartian verb *ašd(u)*-. This interpretation is corroborated by the identical sentences ^{KUR}Aššur ^{LA}A.SI ^{meš}-šie ^{KUR}ebani-uki *ašdu* and ^{KUR}Aššur ^{LA}huradie ^{KUR}ebani-uki *ašdu* of the Khorkhorian inscription, which deal with the invasion of Assyrian troops into Urartu.

2. Lexeme *erašini*

The Urartian inscriptions, along with the sacrifice of bulls, sheep and kids, sometimes mention that of UDU.ŠE "fat sheep". The mention of the latter and UDU *erašini* in identical contexts leads to the conclusion that *erašini* is likely to be the Urartian reading of the sumerogram ŠE "fat". The sameness of the syntactical position of *erašini* and ŠE is also to be noted.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Г.А. Меликишвили, УХН, 264, ուրարտ. տեքստ, տող 23:
2. Նույն տեղում, էջ 391:
3. Н.В. Арутюнян, КУХН, էջ 438:
4. W. von Soden, AHW, III, էջ 1134-1138:

5. F.W. König, HchI, II, էջ 91, ծանոթ. 6, էջ 145, §8 և էջ 175:
6. W. von Soden, AHw, I, էջ 234-236:
7. Н.В.Арутюнян, КУКН, էջ 437:
8. նույնի, КУКН, 173, III, տողեր 1, 25:
9. J. Friedrich, Caucasic, 8, Leipzig, 1931, էջ 117, ծանոթ. 5:
10. И.М. Дьяконов, УПД, էջ 73, 87:
11. Н.В. Арутюнян, КУКН, 424, տող 21:
12. M. Salvini, Ayanis, I, Roma, 2001, էջ 257, սեկցիա III, տող 8:
13. Н.В. Арутюнян, КУКН, 270, տող 7. 415 տող 7, 9. 424, տող 16, 21. 425, տող 10:
14. M. Salvini, Ayanis, I, էջ 257, սեկցիա II, տողեր 9, 11, սեկցիա III, տող 8. սեկցիա IV, տողեր 6, 7:
15. Ինքնուիկ այս տեքստերում ակներև է, որ մի դեպքում առկա է ուրարտերեն ^{LU}huradi բառը, իսկ մյուս դեպքում՝ մրա ^{MS}A.SI գաղափարագիր տարրերակը:
16. Г.А. Меликишвили, УКН, 143, տող 7:
17. F.W. König, HchI, II, էջ 111 (97, III):
18. Н.В.Арутюнян, НУН, էջ 39 և ծանոթ. 139. նույնի, КУКН, 424, տող 14 և ծանոթ. 36:
19. M. Salvini, Ayanis, I, էջ 257, սեկցիա II, տող 9:
20. J. Friedrich, Or., IX, 1940, էջ 214-215:
21. նույնի, HWb, էջ 275, 298:
22. Н.В. Арутюнян, КУКН, 173, III, տող 43:
23. Այսպես ենք ճշգրտում Մ. Սալվինիի չհիմնավորված ^dGI ընթերցումը: DINGIR-*gi* գրությամբ *gi*-ն ուրարտերենի տրական հոլովի ցուցիչն է: DINGIR-*gi* ^dNIN-ը մշակակում է, որ կենդանիների զոհաբերությունը վերաբերում է մի դեպքում սատվածներին, իսկ մյուսում՝ դիցուհիներին: Հմմտ. քերես հենց այստեղ UDU.SE UDU DINGIR^{MS} UDU.SE UDU ^dNIN: Ի դեպ հարցի լուծմանը շատ ավելի մոտ է և հաճելի տպավորություն է թողնում Ե. Գրեկյանի քերես երկակի ^dGI/DINGIR-*gi* ընթերցումը և մեկնաբանությունը: Տես ՊԲՀ, 2004, N1, էջ 225, հակ. կողմ, տող 9, ինչպես նաև էջ 243 և ծանոթ. 102:
24. Տարօրինակ են Մ. Սալվինիի հապճեպ մոտեցումները, երբ մի դեպքում ^dAniqu դիցանունը տրական հոլովի -*gi* ցուցչի հետ միասին թյուրիմացաբար դիտարկում է որպես ^dAniqugi (հմմտ. վերոհիշյալ DINGIR-*gi*-ն), իսկ մյուս պարագայում՝ կովի զոհաբերության պահին այն համարում է դիցուհի (*dea*), իսկ ոչխարի ժամանակ՝ «աստված» (*dio*). M. Salvini, SMEA, XLIV/1, էջ 123:
25. M. Salvini, նույն տեղում, էջ 117, 122, հակ. կողմ, տողեր 2-13, 16-17:
26. Վերականգնումը մերն է: Հմմտ. GUD ^{MS}Rusaini DINGIR-*gi* ^{GUD}AB ^{MS}Rusainie ^dNIN. SMEA, XLIV/1, էջ 122, հակ. կողմ, տող 9-10:
27. Վերականգնումը մերն է: Տես Н.В.Арутюнян, КУКН, 407, հակ. կողմ, տող 30 և ծանոթ. 24:
28. Ըճգրտումները մերն են. Մ.Սալվինիի մոտ՝ UDU-*še*:

Հապավումներ

ՊՐՀ-Պատմա-քանդակագիտական հանդես (Երևան):

КУКН – Н.В.Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.

НУН – Н.В.Арутюнян, Новые урартские надписи Кармир-блур, Ереван, 1966.

УКН – Г.А.Меликишвили, Урартские клинообразные надписи, М, 1960.

УПД – И.М.Дьяконов, Урартские письма и документы, М-Л, 1963.

AHw – W.von Soden, Akkadisches Handwörterbuch (Wiesbaden).

Ayanis. I – A.Çilingiroğlu, Mirjo Salvini, Ayanis, I, Roma, 2001.

Hehl – F.W.König, Handbuch der chaldischen Inschriften. I-II, 1955: 1957.

HWb – J.Friedrich, Hethitischen Wörterbuch. Heidelberg. 1952.

Or. – Orientalia (Roma).

SMEA – Studi Micenei ed Egeo-Anatolici (Roma).